ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

24 նոյեմբերի ուրբաթ 2023
տպագրության ԺԲ տարի

168
(2834)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԵԼԻՔԲԵԿՅԱՆԻ ՇՈՒՐՋ ՕՂԱԿԸ ՍԵՂՄՎՈՒՄ Է

Հայկական ֆուտբոլի խայտառակ վիճակը նորմալ երկրում, բնականաբար, կունենար հետեւանք. ֆեդերացիայի նախագահը հրաժարական կտար, կբողոքեին ֆանատական խմբերն ու իշխանությունները: Մեզանում վիճակը մի փոքր տարօրինակ է. տարբեր տարիքային խմբերի հավաքականները խայտառակ պարտություններ են կրում, ազգային հավաքականը «Եվրո 2024»-ի որակավորման փուլի արդյունքներում զբաղեցնում է «պատվավոր» նախավերջին հորիզոնականը, կանանց ֆուտբոլի արդյունքների մասին ավելի լավ է՝ լռենք, եւ այս իրավիճակում ՀՖՖ նախագահի պաշտոնում հայտնված Արմեն Մելիքբեկյանը դեռ ցանկանում է վերընտրվել այդ պաշտոնում: Գահավիժող հայկական ֆուտբոլի խորհրդանիշը դարձած Մելիքբեկյանի լոբբինգով զբաղվող «Հայկական ժամանակ» օրաթերթի նախկին սպորտային լրագրող, ՀՖՖ փոխնախագահ Արմեն Նիկողոսյանին, կարծես թե, հաջողվում է նորից համոզել Նիկոլ Փաշինյանին, որպեսզի գոնե մեկ տարով էլ պահի Արմեն Մելիքբեկյանին՝ դարձյալ մեծ-մեծ արդյունքներ խոստանալով: Փաշինյանի շրջապատից ֆուտբոլի քաղաքական ազդեցության մասին հասկացող որոշ շրջանակներ դեռեւս չեն հանձնվում ու ամեն բան անում են հայկական ֆուտբոլի աղետը կանխելու ու դրանով իրենց իշխանության վարկանիշը կայունացնելու համար, սակայն դեռեւս վերջնական հստակեցում չկա: Մեզ տեղեկություններ են հասնում, որ իշխանական «դաբռո»-ից հետո Նիկողոսյանը պատրաստվում է նորից հավաքել ՀՖՖ նախագահ ընտրող ընկերությունների մեծ մասին ու բանակցել, թե ով ինչ է ուզում՝ Մելիքբեկյանին ընտրելու դիմաց: Ֆուտբոլն իսկապես սիրող մեր բազմաթիվ ընթերցողներ անդադար խնդրում են, որպեսզի թերթի միջոցով փոխանցվեն Մելիքբեկյանի օրոք ֆուտբոլում կատարվող չարաշահումների, կրիմինալ տարրերի ներգրավման (խոսքը պայմանավորված խաղերի մասին է, որոնցից մեկով արդեն միջազգային հարթակներում քննարկում կա, ու մենք հետաքննում ենք նման խաղերում կրիմինալ էլեմենտի ներգրավման մասին տեղեկությունը), ինչպես նաեւ ՀՖՖ-ում աշխատող անձանց՝ գնալով թանկարժեք դարձող ավտոմեքենաների ու տների ձեռք բերման լուրերը. այս մասով տեղեկությունները ուսումնասիրվում են: Որպես հավելում՝ նշենք, որ «Եվրո 2024»-ի ուղեգիր նվաճեց, օրինակ, Ալբանին, հետխորհրդային երկրներից փայլուն արդյունք գրանցեց Ղազախստանը, որը վերջին խաղում չհաղթելու պատճառով դուրս մնաց եզրափակչի ուղեգրի համար պայքարից, Ուզբեկստանի՝ մինչեւ 17 տարեկանների հավաքականը 1:2 հաշվով օրեր առաջ հաղթեց Անգլիայի իրենց հասակակիցներին եւ այլն: Այդ երկրների իշխանություններն իսկապես են սիրում ֆուտբոլն ու վեր են կանգնում նեղ անձնական շահերից: Հայրենասիրությունը դա է, Նիկո՛լ:

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը վերջերս միշտ սկանդալների մեջ է: Մասնավորապես՝ պարզ է դարձել, որ ԲՏԱ նախարարությունը դրամաշնորհներ է տրամադրել գործունեությունը դադարեցրած ընկերությունների: Նախարարությունը վերակազմավորվել է 2019 թվականի մայիսի 8-ին՝ Տրանսպորտի եւ կապի նախարարությունից դառնալով Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն: 2018 թվականի մայիսի 16-ին Հակոբ Արշակյանը նշանակվել էր ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ, 2018 թվականի հոկտեմբերի 4-ին նշանակվել էր ՀՀ տրանսպորտի, կապի եւ տեղեկատվական տեխնոլոգիաների նախարար, 2019 թվականի հունիսի 1-ին՝ ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար: Նրանից հետո 4 ամիս պաշտոնավարել է Հայկ Չոբանյանը, ապա՝ ներկայիս ՀՀ նախագահ Վահագն Խաչատուրյանը: Մեր տեղեկությունների համաձայն՝ Վահագն Խաչատուրյանը, մեկ տարի պաշտոնավարելուց հետո չցանկանալով կորցնել տիրապետությունը նախարարությունում, այդ պաշտոնին առաջարկել է Ռոբերտ Խաչատրյանին: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ Ռոբերտ Խաչատրյանը Վահագն Խաչատուրյանի հետ բարեկամական կապեր ունի: Ըստ մեր տեղեկությունների՝ Խաչատուրյանը ԲՏԱ նախարարին պատրաստվում է տանել իր մոտ՝ նախագահի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը զբաղեցնելու համար, քանի որ օղակը նրա շուրջ սեղմվում է: Խաչատրյանն իր հերթին որեւէ կապ չունի ոլորտի հետ, նա «Սիմարտեկ» ՓԲԸ-ում է կարիերայի աճ գրանցել՝ տնօրենի օգնական, փոխտնօրեն, տնօրեն: Հավելենք նաեւ, որ Խաչատրյանը մյուս նախարարների պես ՔՊ անդամ չէ: Ավելին՝ Ռոբերտ Խաչատրյանին «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունում չեն ընդունում, նրան դրածո են համարում: Հենց նրա օրոք էլ Հայաստանում SS ոլորտը, ունենալով ամենաշատ հնարավորությունները եւ արտոնությունները, մենաշնորհ ստացած կազմակերպությունների շնորհիվ բացարձակ աճ չի գրանցում:

44-օրյա պատերազմի հանգամանքներն ուսումնասիրող քննիչ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը դեռ հունիսի 20-ին լրագրողների հետ զրույցում հայտարարել էր, որ պատրաստվում են քննիչ հանձնաժողով հրավիրել նաեւ Արցախի նախկին նախագահ Արայիկ Հարությունյանին: Հաշվի առնելով, որ այս պահին Արայիկ Հարությունյանն ապօրինի կերպով գերեվարվել եւ կալանավորվել է Ադրբեջանի իշխանությունների կողմից՝ նրան հանձնաժողով կանչելն անհնարին է դառնում: «Ժողովուրդ» օրաթերթը ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր, քննիչ հանձնաժողովի անդամ Քրիստինե Պողոսյանից հետաքրքրվեց՝ արդյոք Արայիկ Հարությունյանին քննիչ հանձնաժողով կանչելն ուժի մեջ է, եւ ինչպես են դա պատկերացնում: «Կարծում եմ, որ այդ հարցը ճիշտ կլինի տալ հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանին, երկրորդ՝ հանձնաժողովի աշխատանքն արդեն դեկտեմբերի 3-ին ավարտվում է. մեծագույն ցանկության դեպքում անգամ անհնար կլինի դա»,- ասաց Քրիստինե Պողոսյանը: Պատգամավորից հետաքրքրվեցինք նաեւ՝ արդյոք պատրաստվում են կամ արդեն դիմել են այս ընթացքում Արայիկ Հարությունյանին ԱԺ հրավիրելու հարցով Ադրբեջանի ղեկավարությանը. «Հանձնաժողովում նման հարց չի քննարկվել. որքանով որ Ադրբեջանի կառավարության հետ խոսակցություն է տարվում, եւ դիմում են նրանց միջնորդների օգնությամբ այնտեղ բռնի պահվող մեր հայրենակիցների մասով, խոսակցությունն այնպես է ընթանում, որ բոլոր գերիները վերադառնան, առանց բացառության՝ կլինի դա Արայիկ Հարությունյանը, թե զինվոր, թե հասարակ քաղաքացի»:

Մոտ մեկ շաբաթ առաջ ԱԺ-ում առաջին ընթերցմամբ, աղմուկ-աղաղակով հերթական անգամ երկարացվեց հին նմուշի անձնագրերի տրամադրման ժամկետը՝ մինչեւ կենսաչափական անձնագրերի համակարգին լրիվ անցում անելը: «Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ են հայտնի դարձել Հայաստանի անձնագրային համակարգում տիրող քաոսից, մասնավորապես՝ թե ովքեր, ինչպես եւ ինչու են ավիրել համակարգը: Մեզ հաջողվեց պարզել, որ ՀՀ քաղաքացու անձնագրերի վերջին խմբաքանակը՝ 700 հազար անձնագիր, 2022թ. նոյեմբերին «մեկ անձից գնման միջոցով» ձեռք է բերվել ռուսական «Պեռվի պեչատնի դվոր» ընկերությունից: Փաստացի ՀՀ քաղաքացու իդենտիֆիկացման թիվ 1 փաստաթուղթը վստահվել է մեր ռազմավարական դաշնակցին, ընդ որում՝ պայմանագրի անվանումն էլ եղել է «պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր»: Ամենից ուշագրավն այն է, որ մատակարարված «ապրանքը», պարզվում է, «անորակ է», այն չի համապատասխանում տեխնիկական բնութագրին, դրանում անարգել են ՀՀ պետական խորհրդանշանը՝ զինանշանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում:

ԱՆԴՐԱԴԱՐՁԱՎ

ՓՈՍՏԱՆՋՅԱՆԸ՝ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՄԱՍԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի զրուցակիցը Երեւանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ Զարուհի Փոստանջյանն է:

-Տիկին Փոստանջյան, թեեւ Դուք ներկա չէիք, բայց հետեւել եք՝ ինչ կատարվեց ավագանու նիստին. փոխադարձ հայհոյանքներ, ծեծկռտուք, միմյանց մազ քաշել, ջուր շփել իրար վրա: Ի՞նչ բնութագրում կտաք կատարվածին:

-Կուզանայի, որ նման բաներ չկրկնվեին, շատ տգեղ էր: Պետք է ամեն բան անել, որ նման միջադեպեր չկրկնվեն:

-Ըստ Ձեզ՝ ովքե՞ր էին մեղավորները, ովքե՞ր հրահրեցին կռիվը:

-Մեղավորը օրենքն է, որ կարող է նման ավագանի ձեւավորվել: Մեղավորին հասկանալու համար շատ հեռուն պետք է գնալ՝ դեպի 2009թ., երբ նման վատ օրենք ընդունվեց. որպեսզի նորմալ ավագանի ձեւավորվի, ինքը պետք է լինի ճկուն օրենսդրության ներքո: Շատ խոցելի օրենսդրությամբ է ձեւավորվել այս ավագանին. սա է հիմնական պատճառը եւ, իհարկե, տիրող ընդհանուր իրավիճակը:

-Տիկին Փոստանջյան, ուշագրավ է, որ ավագանու կին անդամների մասնակցությամբ սկսվեց միջադեպը. այս մասին ի՞նչ կասեք:

-Կին կամ տղամարդ՝ կապ չունի: Սա նորություն չէր, ԱԺ-ում տեսել ենք նույն բանը: Դահլիճում մարդիկ իրենց վարքագիծը պետք է կառավարեն, բայց եթե թիվ մեկ պաշտոնյան հայհոյանքով է խոսում, էլ ի՞նչ ենք ուզում, այսինքն՝ հայհոյանքը մտցվում է մարդու առօրյա խոսակցության մեջ. սա պատահական չէ: Տարիներ շարունակ այս գործընթացը տեղի է ունենում, հիմնական հեղինակներից մեկն էլ հենց թիվ մեկ պաշտոնյան է:

-Եթե Դուք այդ նիստին ներկա լինեիք, ինչպե՞ս կվարվեիք:

-Իհարկե, պետք է հանդարտեցվեր, չէր կարող շարունակվել, բայց ես մի բան հասկացա, որ այդ ամենը կազմակերպված էր:

-Ո՞ւմ կողմից էր կազմակերպված:

-Ով շահ ունի այդտեղ, իհարկե, առաջին հերթին՝ այսօրվա իշխանությունների:

-Տիկին Փոստանջյան, իսկ պատճառը ո՞րն է, որ մանդատը պահել եք, բայց ավագանու նիստերին չեք մասնակցում:

-Անիմաստ եմ համարում այդ նիստերին մասնակցելը, միեւնույնն է, ոչ մի հարց չի լուծվում:

-Այդ դեպքում ինչո՞ւ եք մանդատը պահում, ինչպե՞ս եք այն օգտագործելու:

-Ինչո՞ւ միայն նիստերին մասնակցելով է որոշվում գործունեությունը. հետեւե՛ք իմ ֆեյսբուքյան էջին ու կտեսնեք՝ ինչ աշխատանք եմ կատարում:

-Տիկին Փոստանջյան, ավագանու մյուս նիստերի՞ էլ չեք մասնակցելու: Եթե շարունակեք չմասնակցել նիստերին, ապա անհարգելի բացակայությունների պատճառով Ձեզ կզրկեն մանդատից:

-Խուլիգանական վայր հաճախելը շատ տհաճ է, առանց այդ էլ այսօր ամենուր այդ վիճակն է, լրացուցիչ մի թունավոր վայր գնալը վնասակար է առողջությանը. դա խուլիգանական վայր է, նման տեղ հաճելի չէ գնալը:

-Հնարավո՞ր է առաջիկայում վայր դնեք մանդատը, եթե չեք ցանկանում մասնակցել նստերին:

-Ժամանակը ցույց կտա՝ ինչպես կվարվեմ. դա իմ որոշելիքն է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԵՐԹԱԿԱՆԸ

ՈԼՈՐՏԻՑ ԱՆՏԵՂՅԱԿ ՆԱԽԱՐԱՐԸ

Որ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը չի տիրապետում իր ղեկավարած ոլորտին, նորություն չէ: Հերթական անգամ ականատես եղանք մասնագիտությամբ իրավաբան առողջապահության նախարարի՝ իր ղեկավարած ոլորտից անտեղյակության եւս մեկ դրսեւորման:

Նախարարը երեկ՝ կառավարության նիստից հետո, լրագրողների հետ ճեպազրույցում խոսել է ԵՊՀ-ում տեղի ունեցած հրդեհից տուժած երկու պացիենտի մասին՝ ասելով, որ նրանց վիճակը ծանր է, բայց կյանքին վտանգ չի սպառնում:

Եւ, ահա, այդ հայտարարությունից րոպեներ անց Ավանեսյանն իր ֆեյսբուքյան էջում շտապել է հերքել ինքն իրեն՝ հայտնելով տուժածներից մեկի մահվան մասին:

«Հարգելի՛ լրագրողներ, կառավարության այսօրվա նիստից հետո՝ ձեզ հետ ճեպազրույցի ընթացքում՝ ԵՊՀ-ում տեղի ունեցած դեպքի հետեւանքով տուժած քաղաքացիների առողջական վիճակի մասին խոսելիս, ներկայացրել եմ երեկ՝ «Այրվածքաբանության եւ մաշկաբանության ազգային կենտրոն» իմ այցի պահին նրանց առողջական վիճակի մասին եղած տեղեկատվությունը, երբ երկուսի առողջական վիճակն էլ գնահատվում էր ծանր:

Ցավոք, հիվանդներից մեկի վիճակը կտրուկ վատացել է (ինչը նաեւ այրվածքային հիվանդության առանձնահատկություններից է): Բուժաշխատողների կողմից սիրտ-թոքային վերակենդանացումը եղել է անարդյունավետ, պացիենտի կյանքը փրկել չի հաջողվել»,- գրել է նա:

Արձանագրենք՝ լրագրողների հետ նրա ճեպազրույցը եղել է կեսօրից հետո՝ մոտավորապես ժամը 13.00-ի սահմաններում, առնվազն տարօրինակ է՝ տեղեկատվական տեխնոլոգիաների այս զարգացվածության դարաշրջանում նախարարը տեղյակ չէ իր ոլորտի օպերատիվ ինֆորմացիայից:

Սա դեռ քիչ է, լրագրողներին մեկ օր առաջվա տվյալներ է հաղորդում, այնինչ նա պարտավոր էր այդ տեղեկատվությանը տիրապետել ամենաօպերատիվ կերպով՝ հաշվի առնելով թեմայի կարեւորությունը: Սա սովորական պացիենտի մասին տեղեկություն չէ, այլ ԵՊՀ հրդեհի, որ իսկական շոկ էր հասարակության համար:

Միայն գովելի է, որ նախարարը շտապել է ինքն իրեն ուղղել, բայց, միեւնույնն է, սա չի արդարացնում նրա անտեղյակությունը:

ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

«ԱԺ կանոնակարգ» օրենքով՝ 2022 թվականի փետրվարի 10-ից ձեւավորված ԱԺ քննիչ հանձնաժողովի գործունեությունը վեց ամսով երկարաձգվել է, եւ լրացել է գործունեության ժամկետը 2023 թվականի օգոստոսի 10-ին: Այսինքն՝ օգոստոսի 11-ից այս հանձնաժողովը փաստացի գոյություն չունի, սակայն հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը բացատրել է, թե երկու տարվա արձակուրդների ընթացքում հանձնաժողովը փաստացի չի գործել, ինչի պատճառով հանձնաժողովի աշխատանքը կամփոփվի դեկտեմբերին: «ԱԺ կանոնակարգ» օրենքը հստակ է սահմանում, որ միայն մեկ անգամ 6 ամսով երկարաձգելու հնարավորություն կա, եւ արձակուրդը չի կարող հիմք հանդիսանալ որեւէ մարմնի լիազորությունների ժամկետի երկարացման համար: Այս տրամաբանությամբ Ազգային ժողովն էլ պետք է 5.5 տարի գործի, որովհետեւ ամեն տարի մի ամիս արձակուրդում է: Քանի որ «ԱԺ կանոնակարգ» օրենքի պահպանումը եւ ԱԺ բնականոն գործունեությունը ապահովելու պարտավորությունն ունի միայն ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը, հետաքրքրվեցինք՝ ինչ քայլեր է ձեռնարկում ԱԺ գործունեության ժամկետը լրացած հանձնաժողովի ըստ էության ապօրինի գործունեությունը չթույլատրելու համար: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում է ուղարկել ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանին: Մեր հարցմանն ի պատասխան՝ ԱԺ-ից տեղեկացնում են. «2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված ռազմական գործողությունների հանգամանքների ուսումնասիրման նպատակով քննիչ հանձնաժողովն իրավունքի ուժով ստեղծվել է 10.02.2022թ.: 07.07.2022 թ. հանձնաժողովը դիմել է ՀՀ ԱԺ նախագահին գործունեության ժամկետը 6 ամսով երկարաձգելու համար: Նշենք, որ հանձնաժողովի գործունեության ժամկետի երկարաձգման հարցը քննարկվում է ԱԺ նիստում. հարցը քննարկվել է 2022 թ. սեպտեմբերի առաջին նիստում, եւ երկարաձգվել է 6 ամսով: Հանձնաժողովը գործունեությունը երկրորդ անգամ երկարաձգելու խնդրանքով դիմել է 02.04.2023թ.: Այն ընդունվել է 2023 թ. մայիսի 3-ի նիստում՝ 6 ամսով մինչեւ սույն թվականի նոյեմբերի 3-ը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 եւ 2023 թվականների ամռանը պատգամավորները գտնվել են իրենց հասանելիք արձակուրդներում, եւ հանձնաժողովը փաստացի չի գործել իր ամբողջական կազմով, ուստի վերոնշյալ ժամանակահատվածների հաշվանցմամբ հանձնաժողովի լիազորությունները ավարտվելու են 2023 թվականի դեկտեմբերին՝ ՀՀ ԱԺ համապատասխան նիստում հանձնաժողովի զեկույցի քննարկումն ավարտելու պահին: Նշենք, որ քննիչ հանձնաժողովը կազմելու եւ Ազգային ժողովին է ներկայացնելու համապատասխան զեկույց»: ԱԺ նախագահի պարզաբանման մեջ էլ հստակ ժամկետ նշված չէ, թե երբ է ավարտվելու հանձնաժողովի աշխատանքը. գրված է՝ 2023թ. դեկտեմբերին: Սա նշանակում է, որ «ԱԺ կանոնակարգ» օրենքը խախտված է, ինչի համար իրավական երկրում Ալեն Սիմոնյանը պետք է պատժվեր: Նա փաստացի չի կարողանում ապահովել «ԱԺ կանոնակարգ» սահմանադրական օրենքի պահպանումը եւ ԱԺ բնականոն գործունեությունը:

ԿԱՐԵՎՈՐԸ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՀՊԱՆԵԼՆ Է

ՀԱՊԿ գլխավոր քարտուղար Իմանուալի Թասմաղամբետովը Մինսկում ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների հանդիպումից հետո կայցելի Երեւան եւ հայկական կողմին կհանձնի ստորագրված փաստաթղթերը: «Ժողովուրդ» օրաթերթի փոխանցմամբ՝ այս մասին ՀԱՊԿ Հավաքական անվտանգության խորհրդի նիստի մեկնարկից առաջ հայտարարել է Բելառուսի արտգործնախարար Սերգեյ Ալեյնիկը:

«Մենք պայմանավորվեցինք, որ գագաթնաժողովից հետո ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը կայցելի Երեւան, եւ համաձայնեցման հանձնաժողովի շրջանակներում վերջնական լրամշակում անցած բոլոր որոշումները կփոխանցենք մեր հայաստանցի գործընկերներին եւ հույս կունենանք, որ նրանք կմիանան դրանց», - Բելառուսի ԱԳ նախարարի խոսքերն է մեջբերում «ՏԱՍՍ»-ը:

Ալեյնիկը նշել է, որ ՀԱՊԿ-ի խնդիրն է պահպանել բոլոր անդամ երկրների համերաշխությունը:

«Այսօր ամենակարեւորը կազմակերպության բոլոր անդամների համերաշխությունն ու միասնությունը պահպանելն է: Հենց դա էլ մենք, ըստ էության, ցույց տվեցինք երեկ արտգործնախարարների, պաշտպանության նախարարների խորհրդի, ՀԱՊԿ անդամ երկրների անվտանգության խորհուրդների քարտուղարների համատեղ նիստի ժամանակ», - ասել է նա լրագրողներին:

Ալեյնիկը հավելել է, որ ՀԱՊԿ անդամ երկրներին հաջողվել է համաձայնության գալ Հավաքական անվտանգության խորհրդի քննարկմանը ներկայացվելիք գրեթե բոլոր փաստաթղթերի շուրջ:

Մինսկում անցկացվող ՀԱՊԿ խորհրդի նիստին կմասնակցեն ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը, Ղազախստանի նախագահ Կասիմ-Ժոմարտ Տոկաեւը, Ղրղզստանի նախագահ Սադիր Ժապարովը, Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնը: Հյուրերին կընդունի 2023 թվականին ՀԱՊԿ-ում նախագահող Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն: Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը չի մասնակցի ՀԱՊԿ անդամ պետությունների ղեկավարների հանդիպմանը: Փաշինյանն այդ մասին տեղեկացրել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հեռախոսազրույցի ժամանակ: Հայաստանի պաշտոնյաները չեն մասնակցել նաեւ ՀԱՊԿ խորհրդի նիստին նախորդած նիստերին՝ ՀԱՊԿ երկրների արտաքին գործերի եւ պաշտպանության նախարարների, անվտանգության խորհրդի քարտուղարների մասնակցությամբ:

ԽՈՍԵՑ

ՓՈԽՆԱԽԱՐԱՐՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Առաջիկայում Հայաստանի ու Ադրբեջանի արտաքին գործերի նախարարների հանդիպում նախատեսված չէ. այս մասին նոյեմբերի 23-ին ԱԺ-ում լրագրողների հետ զրույցում ասաց ՀՀ ԱԳ փոխնախարար Մնացական Սաֆարյանը:

Հարցին՝ առաջիկայում նախատեսված է արդյոք Միրզոյան-Բայրամով հանդիպում, նա արձագանքեց. «Այդպիսի տեղեկատվություն դեռեւս չկա»:

ԱԳ փոխնախարարը Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանին սահմանազատման հանձնաժողովի հերթական հանդիպումը համարում է Հայաստանի կողմից կառուցողականության դրսեւորում:

Հիշեցնենք՝ երեկ հայտնի դարձավ, որ Հայաստանի եւ Ադրբեջանի պետական սահմանին, ըստ նախնական պայմանավորվածության, նոյեմբերի 30-ին կկայանա պետական սահմանի սահմանազատման հանձնաժողովի հերթական նիստը:

Ադրբեջանի հետ բանակցություններում կան հարցեր, որտեղ միջնորդների առկայությունը պարտադիր է:

«Կան հարցեր, որտեղ միջնորդների ներկայությունը շատ կարեւոր դեր ունի», - ասաց նա:

Այդ հարցերը, ըստ փոխնախարարի, օրինակ, վերաբերում են Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված անձանց իրավունքներին: «Այստեղ կարեւոր է միջազգային մեխանիզմների առկայությունը: Դա մի հարց է, կան նաեւ այլ հարցեր, որտեղ երաշխիքները կարեւոր են: Մենք նշել ենք, որ այս պահին բռնի տեղահանված բնակչության իրավունքների հարցը բարձրաձայնվում է Հայաստանի կողմից բանակցություններում», - ընդգծեց Սաֆարյանը:

Խաղաղության պայմանագրի շուրջ բանակցություններում ադրբեջանցիների՝ Հայաստան վերադարձի հարց չկա:

«Մենք բազմիցս նշել ենք, որ այս խնդիրը Ադրբեջանի կողմից ոչ կառուցողական մոտեցումների շարքին է վերաբերում»,- ասաց նա:

Անդրադառնալով ՀԱՊԿ-ից դուրս գալուն՝ Մնացական Սաֆարյանը նշեց, որ այս փուլում եւ այս պահին ռուսական ռազմաբազան Հայաստանից հանելու կամ ՀԱՊԿ-ից Հայաստանի դուրս գալու հարցեր ՀՀ օրակարգում չկան՝ մեկնաբանելով ռուս պատգամավոր Զատուլինի կողմից հնչեցրած մտահոգությունները, որ առաջիկայում կդրվի Գյումրիից ռուսական բազան հանելու, ինչպես նաեւ ՀԱՊԿ-ից ու ԵԱՏՄ-ից ՀՀ-ի դուրս գալու հարցը:

«Աշխատանքային հարաբերություններ են, բնականաբար, կան տարաձայնություններ որոշ հարցերի շուրջ, շարունակում ենք աշխատանքները դրանց անդրադառնալու, արձագանքելու ուղղությամբ»,- նշեց փոխարտգործնախարարը՝ անդրադառնալով լրագրողի հարցին, թե ինչպիսին են հիմա հայ-ռուսական հարաբերությունները՝ նկատի ունենալով նաեւ տարբեր պաշտոնյաների կողմից հնչող փոխադարձ քննադատությունները:

Փոխնախարար Սաֆարյանը նշեց, որ ՀԱՊԿ-ի տարբեր միջոցառումներին մասնակցելու որոշումը ՀՀ-ն կայացնում է՝ ըստ նպատակահարմարության:

Ինչ վերաբերում է ՌԴ-ի կողմից արած այն հայտարարություններին, որ Հայաստանը քաղաքական վեկտոր է փոխում, փոխարտգործնախարարն ասաց. «Դրանք իրենց մոտեցումներն են, այդ մասով մենք հայտնել ենք մեր մոտեցումների մասին»:

Հիշեցնենք՝ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոյի հետ հեռախոսազրույցում ասել էր, որ չի կարող մասնակցել նոյեմբերի 23-ին Մինսկում կայանալիք ՀԱՊԿ գագաթնաժողովին:

Ավելի ուշ Փաշինյանը խորհրդարանում հայտարարեց, որ ՀԱՊԿ-ը, ի հեճուկս իր ունեցած պարտադիր պարտավորությունների, պատշաճ արձագանք չի տվել Հայաստանի անվտանգային մարտահրավերներին: Նրա խոսքով՝ մեր հանրության համար էլ հասկանալի չէ, թե ինչու ենք ամեն անգամ գնում, նույն բաները կրկնում՝ չստանալով ոչ մի արձագանք, թողնում, վերադառնում, հետո հաջորդ անգամ նորից գնում, նույն բաները կրկնում:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ «ԱՐՏԱԿԱՐԳ» ՆԻՍՏ

Կառավարության նիստի ժամանակ՝ նոյեմբերի 23-ին՝ Նիկոլ Փաշինյանի ելույթի ժամանակ, հոսանքի տատանում եղավ, եւ նիստերի դահլիճում էլեկտրաէներգիայի անջատում եղավ մի քանի վայրկյանով:

«Սա այն է, ինչի մասին Ձեզ ասում էի, պարոն Սանոսյան. այսօր էլ եմ այս թեմայով խոսակցություն ունեցել աշխատակազմի ղեկավարի հետ: ՀՀ-ում էլեկտրական էներգիայի որակի հարցը բարձրացնում ենք ու այսպես էլ հետեւողական չենք լինում: Ինչքա՞ն պետք է ես հանձնարարական տամ. չի կարելի 10 տարի նույն բանի մասին անընդհատ հանձնարարական տալ:

Մեր երկրում անորակ է էլեկտրական հոսանքը, այս շենքում՝ նույնպես, աշխատասենյակներում լույսերը թարթում են, ու ոչ մի անակնկալ չկա, որ հոսանքը գնում է»,- մթության մեջ բարկացավ Փաշինյանը՝ դիմելով ՏԿԵ նախարար Գնել Սանոսյանին:

ԿԱՅՑԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Մինսկում ՀԱՊԿ գագաթնաժողովի բոլոր որոշումները լեգիտիմ են լինելու՝ չնայած հայկական կողմի բացակայությանը. այս մասին լրագրողներին ասել է Բելառուսի արտգործնախարար Սերգեյ Ալեյնիկը (փոխանցում է ԲԵԼՏԱ-ի թղթակիցը):

Արտգործնախարարը հաստատել է, որ ՀԱՊԿ-ում որոշումներն ընդունվում են կոնսենսուսով: «Ես հեռախոսազրույց եմ ունեցել իմ հայ գործընկեր Արարատ Միրզոյանի հետ, քննարկել ենք, ի թիվս այլ հարցերի, այս հարցերն ու որոշումների կայացման մեխանիզմները: Բոլոր որոշումները, որոնք այսօր կկայացվեն, միանգամայն օրինական են: Կազմակերպության կանոններին եւ ընթացակարգին համապատասխան՝ որոշումներն ընդունվում են բոլոր անդամ երկրների համաձայնությամբ: Մենք պայմանավորվել ենք, որ գագաթնաժողովից հետո ՀԱՊԿ գլխավոր քարտուղարը կայցելի Երեւան, եւ, բնականաբար, բոլոր որոշումները, որոնք այստեղ վերջնական տեսքի են բերվել հանձնաժողովի շրջանակներում, կփոխանցենք մեր հայ գործընկերներին, եւ մենք հույսը դնելու ենք նրանց վրա, որ կմիանան նրանց»,- ասաց նա:

Ինչ վերաբերում է Մինսկում կայանալիք գագաթնաժողովին հայկական կողմի բարձր ներկայացուցիչների, այդ թվում՝ վարչապետի չժամանելուն, Սերգեյ Ալեյնիկն ասել է, որ դրան պետք է հանգիստ վերաբերվել:

ԼՈՒԿԱՇԵՆԿՈՅԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

«Խնդիրները պետք է լուծել եւ քննարկել սեղանի շուրջ, այլ ոչ թե դեմարշի դիմել»,- երեկ ՀԱՊԿ ԽՎ նիստում հայտարարել է Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն:

Հիշեցնենք, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը, ինչպես նաեւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը հրաժարվել են երեկ մասնակցել այդ նիստին:

ՊԱՐՁՈՒՄ ԵՆ

ՁՀԱՆԳԻՐՅԱՆԻՆ ՀՐԱՎԻՐԵԼ ԵՆ ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Հակակոռուպցիոն կոմիտե է հրավիրվել Բարձրագույն դատական խորհրդի նախկին նախագահ, նախկին զինդատախազ Գագիկ Ջհանգիրյանը եւ հարցաքննվել:

Հարցաքննությունը կապված է եղել Ռուբեն Վարդազարյանի կողմից հրավիրված ասուլիսում աղմկահարույց ձայնագրության հրապարակման հետ:

«Ժողովուրդ» օրաթերթը դիմել է Հակակոռուպցիոն կոմիտեի լրատվական բաժին, որտեղից մեզ իրավիճակի մասին չմեկնաբանեցին՝նշելով, որ քրեական վարույթի շրջանակում հարցաքննվող անձանց վերաբերյալ տվյալներ չեն հայտնում:

Հիշեցնենք, որ 2022թ. հունիսի 20-ին Ռուբեն Վարդազարյանը հրավիրված ասուլիսում աղմկահարույց ձայնագրություն էր հրապարակել, որով հիմնավորվում էր, որ ԲԴԽ նախագահի պաշտոնակատար Գագիկ Ջհանգիրյանը փորձել է պարտադրել Վարդազարյանին հրաժարական տալ: Աղմկահարույց զրույց-պահանջը տեղի էր ունեցել ընթրիքի սեղանի շուրջ, որին ներկա են եղել ոչ միայն Վարդազարյանն ու Ջհանգիրյանը, այլ նաեւ ԲԴԽ անդամ Ստեփան Միքայելյանը: Հրապարակված ձայնագրությունից հասկանալի էր, որ Վարդազարյանին վարչապետի անունից առաջարկվել է հրաժարական տալ, իսկ Ջհանգիրյանն էլ ստանձնել է միջնորդի դեր՝երաշխավորելով, որ նրա նկատմամբ հետապնդումներ չեն իրականացվի, եթե հրաժարական ներկայացնի:

Ջհանգիրյանը Հանրայինի եթերում անձամբ խոստովանել է, որ բանակցություններ իսկապես վարել է Վարդազարյանի հետ հրաժարական տալուն տրամադրելու համար: Ավելին՝ վերջինս հայտարարել է, որ ԲԴԽ նախագահին հրաժարական պարտադրելն այնքան էլ հեշտ գործ չէ, ու ինքը հոգեբանական հնարքներ է կիրառել, «կուտ տվել»:

Աղմկահարույց ձայնագրությունից եւ առավել անհասկանալի հարցազրույցից օրեր անց հայտարարվեց, թե Գագիկ Ջհանգիրյանն ունի առողջական խնդիրներ եւ ենթարկվել է վիրահատության: Ակնառու էր, որ Ջհանգիրյանը այդ խայտառակ ձայնագրությունից հետո առողջական խնդիրների քողի ներքո պատրաստվում էր հրաժարական տալ: Եւ, ահա, հուլիսի 1-ին արդեն պաշտոնապես հաստատվեց Ջհանգիրյանի հրաժարականը: ՀՀ քննչական կոմիտեում նշված ձայնագրության կապակցությամբ նախապատրաստված նյութերով նախաձեռնվել էր քրեական վարույթ, որը դեկտեմբերին կարճվել էր՝ հանցանքի բացակայության հիմքով:

ՔԿ-ում վկայի կարգավիճակով վարույթի շրջանակներում հարցաքննվել են նաեւ ԲԴԽ արդեն նախկին անդամներ Ստեփան Միքայելյանը, Սերգեյ Չիչոյանը եւ ԲԴԽ անդամ Վիգեն Քոչարյանը: Ընդ որում՝ վերջին երկուսի նկատմամբ քրեական հետապնդում չհարուցելու որոշում էր կայացվել: Նշված որոշման դեմ Վարդազարյանը բողոք էր ներկայացրել, սակայն մինչ բողոքը կստացվեր, ՀՀ գլխավոր դատախազի տեղակալ Արթուր Պողոսյանը սեփական նախաձեռնությամբ վերացրել էր քննիչի որոշումը՝ ըստ քննչական ենթակայության գործը Հակակոռուպցիոն կոմիտե ուղարկելու որոշում կայացնելով: Միեւնույն ժամանակ դատախազն արձանագրել է, որ նախաքննության ավարտ հայտարարելուց հետո ժամկետները չեն պահպանվել, քանի որ ավարտ հայտարարելու մասին տեղեկացնելուց հետո քննիչը ժամանակ չի տրամադրել բողոքարկման համար: Վարույթը Հակակոռուպցիոն կոմիտե տեղափոխվելուց հետո փաստացի սառեցված վիճակում պահվել է երեք ամիս, ապա՝կարճվել՝ հանցանքի բացակայության հիմքով: Գործի վարույթը կարճելու որոշումը դատական կարգով վիճարկվել է: Արդյունքում Հակակոռուպցիոն դատարանը՝դատավոր Մերի Մոսինյանի նախագահությամբ, բավարարել է Վարդազարյանի ներկայացուցիչների բողոքը՝ վերացնելով գործի վարույթը կարճելու որոշումը: Դատական ակտը չի վիճարկվել ո՛չ դատախազության, ո՛չ քննիչի կողմից, ըստ այդմ՝ դատական ակտն օրինական ուժի մեջ է մտել: Այժմ վարույթը վերսկսվել է, ու նախկին պաշտոնյաները հարցաքննվում են:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅՏՆԻ Է

Ո՞Վ Է ՊԱՅԹՅՈՒՆԻ ՋՈՀԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, թե ԵՊՀ պայթյունի հետեւանքով 2-րդ մահացած անձը ով էր: Վերջինս Ահարոն Հակոբյանն էր՝ ծնված 1957 թվականին: Նա աշխատում էր ԵՊՀ-ում՝ իրականացնելով համալսարանի կանաչապատման աշխատանքները:

Հիշեցնենք, որ ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը գրել էր, որ մահացել է հիվանդանոց տեղափոխված պացիենտներից մեկը:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ հայտնի է օրերս ԵՊՀ-ում տեղի ունեցած պայթյունից տուժածների անունները:

Այսպիսով, հիվանդանոց տեղափոխված անձանցից մեկը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՊԾ առաջին գումարտակի 2-րդ վաշտի լեյտենանտ Հայկ Ղազարյանն է՝ ծնված 1990 թվականին. վերջինս ծխահարվել է եւ այս պահին գտնվում է հիվանդանոցում: Մյուս տուժածները ԵՊՀ աշխատակիցներ Սեյրան Բիչախչյանն է՝ ծնված 1953 թվականին, Ահարոն Հակոբյանն է՝ ծնված 1957 թվականին:

Իսկ, ահա, պայթյունի հետեւանքով մահացածը Երեւանի բնակիչ Ժորժիկ Խաչատրյանն է՝ ծնված 1950 թվականին հացածը Երեւանի բնակիչ Ժորժիկ Խաչատրյանն է՝ ծնված 1950 թվականին Երեւանում:

Իսկ ի՞նչ վարկած է քննվում այս պահին իրավապահ համակարգում:

«Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկությունների համաձայն եւ ըստ նախնական վարկածի՝ Ս. Բիչախչյանը Երեւանի պետական համալսարանի նկուղային հարկում իրեն անհայտ ծագման նյութը փակ տարայից դատարկել է դույլի մեջ, ինչի հետեւանքով էլ առաջացել է այս պայթյունը:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԳՈՂԱՑԵԼ Է ԳՐՔԻ ՄԻՋԻՑ

Նոյեմբերի 22-ի առավոտյան ոստիկանության օպերատիվ կառավարման կենտրոն զանգած քաղաքացին հայտնել է, որ Էջմիածին քաղաքի Արագածի զանգվածի շենքերից մեկի մի բնակարանից գողություն է կատարվել: Ոստիկանությունից «Ժողովուրդ» օրաթերթին հայտնում են, որ նշված հասցե ոստիկանության Վաղարշապատի բաժնից օպերատիվ խումբ է մեկնել: Պարզվել է, որ նոյեմբերի 21-ի ժամը 10:00-ից նոյեմբերի 22-ի ժամը 08:30-ն ընկած ժամանակահատվածում մուտք են գործել նշված բնակարան եւ հյուրասենյակի պահարանի գրքի միջից գողացել 5000 դոլար: 84-ամյա տանտիրուհուց ընդունվել էր հաղորդում:

Ոստիկանության Վաղարշապատի բաժնի ծառայողների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների շնորհիվ պարզվել է, որ գողությունը կատարել է էջմիածինցի 42-ամյա կինը: Նա Արագածի զանգվածի շենքերից մեկի մոտ հայտնաբերվել, ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Անձնական խուզարկությամբ նրա մոտ հայտնաբերվել է գողոնի մի մասը՝200 դոլար: Բացատրական աշխատանքի արդյունքում նա խոստովանել է արարքը եւ հայտնել, որ գողոնի մյուս մասը՝4.800 դոլարը, իր տանն է:

42-ամյա կինը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Վաղարշապատի քննչական բաժին:

ԽՈՒԼԻԳԱՆՈՒԹՅՈՒՆ

«ՕՐԵՆՔՈՎ ԳՈՂԵՐԻ» ՈՐՍ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ օրերս Սեւան քաղաքում խուլիգանություն կատարելու եւ ապօրինի թմրամիջոց պահելու համար ձերբակալվել եւ Նոր Նորքի բաժին են տեղափոխվել 4 անձ, որոնցից մեկը կին է եղել: Ձերբակալված անձանցից մեկը Վիտալի Ավդիանին է՝ ազգությամբ վրացի «օրենքով գող»: Իրավապահները «օրենքով գողի» մոտ հայտնաբերել են թմրանյութ: «Օրենքով գողի» կնոջը բաց են թողել, իսկ մնացած 3 հոգին ձերբակալված են:

Հիշեցնենք, որ նոյեմբերի 17-ին «օրենքով գողերի ռազբորկա» է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 16:30-ի սահմաններում ՀՀ ՆԳՆ ոստիկանությունն օպերատիվ տեղեկություններ է ստացել, որ Դավիթ Բեկի 111/30 հասցեում կրակոցներ են հնչել: Օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում հայտնաբերվել եւ բերման են ենթարկվել 13 անձինք, այդ թվում՝ Արսեն Երեւանսկին, իսկ մյուս մասնակիցներին փնտրում էին: Ավդիանին իրավապահները ձերբակալել են Սեւանի ճանապարհին:

ՄԻՋԱԴԵՊԻ ՀԵՏՔԵՐՈՎ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ ոստիկանությունից հաղորդում է ստացվել այն մասին, որ 2023 թվականի նոյեմբերի 11-ին՝ Երեւանի ավագանու հերթական նիստի ժամանակ՝ ավագանու մի քանի անդամների միջեւ առաջացած տարաձայնության ընթացքում, փոխադարձ հարվածներ են հասցվել, որի ընթացքում, հասարակության նկատմամբ դրսեւորելով անհարգալից վերաբերմունք, հնչել են հայհոյանքներ՝այդկերպ խախտելով քաղաքապետարանի բնականոն աշխատանքը:

Դեպքի առթիվ ՀՀ քննչական կոմիտեի ԵՔՔՎ Կենտրոն եւ Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական երրորդ բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի (մի խումբ անձանց կողմից խուլիգանություն կատարելը) եւ 195-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի (մի խումբ անձանց կողմից հարվածներ հասցնելը կամ բռնի այլ գործողություններ կատարելը) հատկանիշներով:

Կատարվում է նախաքննություն, հանգամանքները պարզվում են:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

● *Ըստ ոստիկանության տվյալների՝նոյեմբերի 22-ից 23-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 67 դեպք, որոնցից 3-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲԱԺՆԻ ՊԵՏԸ «ԱՐԴԱՐԱՑՐԵԼ Է»

«Ժողովուրդ» օրաթերթը Դիլիջան համայնքի ղեկավար Դավիթ Սարգսյանի ընտանիքին պատկանող ավտոլվացման կետի մասին գրել էր դեռեւս 2021թ. փետրվարին, երբ Սարգսյանը Դիլիջան համայնքի ավագանու անդամ էր: Հաղարծին գյուղի հարավային ծայրին՝գյուղը շրջանցող, սողանքի պատճառով չգործող միջպետական ավտոճանապարհի վրա՝ ապօրինի՝ առանց շինթույլտվության, ավտոլվացման կետ է կառուցվել, այն հիմա էլ աշխատում է: Ավտոլվացման կետը կառուցված է այժմ գործող Հայաստան-Վրաստան միջպետական ավտոճանապարհից մի քանի մետր հեռավորությամբ: Դավիթ Սարգսյանը 2021-ի փետրվարին «Ժողովուրդ» օրաթերթին ասել է, որ ավտոլվացման կետը գրանցված է իր եղբայր, անհատ ձեռներեց Սասուն Սարգսյանի անվամբ, ինքը դրա բաժնետեր է:

Դիլիջան համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանն իր 2019թ. օգոստոսի գրությունով ավտոլվացման կետի վերաբերյալ հայտնել է, որ իր առաջին իսկ պահանջի դեպքում ապօրինի կառուցված ավտոլվացման կետը պետք է քանդվի. Դիլիջանի համայնքապետարանն ավտոլվացման կետի ապօրինի կառուցման համար 200 հազար դրամի չափով տուգանք է կիրառել:

ՀՀ ոստիկանապետ Արամ Հովհաննիսյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝նրան հարցնելով՝Հաղարծին գյուղում ապօրինի կառուցված ավտոլվացման կետը տարիներ շարունակ գործում է, ոստիկանության Դիլիջանի բաժինը ինչ միջոցներ է արդյոք ձեռնարկել այդ առթիվ:

Նոյեմբերի 17-ին ոստիկանության Դիլիջանի բաժնի պետ Եփրեմ Գալստյանի ստորագրությամբ «Ժողովուրդ» օրաթերթը ստացել է պատասխան, որում նշված է. «Հաղարծին բնակավայրում գտնվող մայրուղուն մոտ առկա ավտոլվացան կետի տարածքի համար կա տրված թույլտվություն՝ որպես ժամանակավոր օգտագործման ծածկ: Կատարված ուսումնասիրություններով ոչ մի անօրինական խախտումներ չեն հայտնաբերվել»:

Ի՞նչ է նշանակում «անօրինական խախտումներ», խախտումներն ինքնին ապօրինություն են, «ոչ մի անօրինական խախտումներ» բառակապակցությունը սխալ, անգրագետ է: Անդրադառնանք իրավական հարցերին, որոնք Եփրեմ Գալստյանն անտեսել է՝ ո՞ւմ կողմից, ե՞րբ, ինչքա՞ն ժամանակով է տրվել տարածքը ժամանակավոր օգտագործման ծածկ օգտագործելու համար թույլտվությունը, այդ ժամկետն այժմ չի՞ ավարտվել, ժամանակավոր օգտագործման ծածկն ու ավտոլվացման կետը նո՞ւյն բանն են:

Հաղաձին գյուղում ավտոլվացման կետը կառուցվել է ապօրինի, առանց շինթույլտվության: Ոստիկանության Դիլիջանի բաժնի ուսումնասիրություններով խախտումներ չեն հայտնաբերվել, այդ դեպքում նախկինում Դիլիջանի համայնքի ղեկավար Արմեն Սանթրոսյանը ինչո՞ւ է պահանջ դրել, որ իր առաջին իսկ պահանջի դեպքում ավտոլվացման կետը պետք է քանդվի, ապօրինի կառույցի կապակցությամբ 200 հազար դրամի չափով տուգանք է կիրառել:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՀԱՆԴԻՊԵՑԻՆ

ԲՈՂՈՔԻ ԱԿՑԻԱ՝ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ վաղ առավոտից կառավարական երրորդ շենքի բակը բազմամարդ է:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այսկերպ քաղաքացիներն իրենց բողոքն էին արտահայտում:

Նախնական տվյալներով՝ բողոքի պատճառը եղել է Արարատյան դաշտի ստորերկրյա ջրային պաշարների նվազումը եւ որակի փոփոխությունը:

Շրջակա միջավայրի նախարարությունից «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին, որ նախարար Հակոբ Սիմիդյանն ընդունել է Կառավարության 3-րդ մասնաշենքի մոտ իրենց բողոքն արտահայտող տնտեսվարողներին:

Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների հյուծման հետ կապված եւ ձկնաբուծական տնտեսություններում փակ շրջանառու համակարգերի ներդրման խնդիրների իրավակարգավորման նպատակով «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանվել է նոր՝«հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող փակ շրջանառու համակարգ» հասկացություն, իսկ «Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքում լրացումներ եւ փոփոխություններ կատարելու մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով նախատեսվել է իրավական հիմք՝հորատանցքի միջոցով ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործում իրականացնող ձկնաբուծարաններում փակ շրջանառու համակարգի ներդրման կարգի սահմանման համար, որից եւ բողոքել են քաղաքացիները:

Ավելի ուշ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Շրջակա միջավայրի նախարարությունից տեղեկացրին, որ քննարկմանը ներկա ձկնաբուծական տնտեսությունների ներկայացուցիչները բարձրաձայնել են օրենքի նախագծի հետ կապված իրենց մտահոգությունները:

Նախարարը ներկայացրել է Արարատյան արտեզյան ավազանի ստորերկրյա ջրային ռեսուրսների ներկայիս վիճակը, մոնիթորինգային ուսումնասիրությունների արդյունքները եւ հույս հայտնել, որ տնտեսվարողները գիտակցում են, որ իրականացվող փոփոխությունները բխում են ՀՀ յուրաքանչյուր քաղաքացու շահերից, այն է՝խնայել ջրային ռեսուրսները:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել շարունակել հանդիպումները արդեն իսկ ձեւավորված աշխատանքային խմբի շրջանակում: Նախարարը եւ բողոքի ակցիա իրականացնող տնտեսվարողները պայմանավորվել են միասին քննարկել եւ համատեղ լուծումներ գտնել ձկնաբուծական տնտեսություններում փակ շրջանառու համակարգերի ներդրման հնարավորությունների վերաբերյալ:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՆՑՈՒԴԱՐՁ

ԱՐԴՅՈՔ ԹՌԻՉՔՆԵՐ ԿԼԻՆԵ՞Ն

«Ժողովուրդ» օրաթերթը նախկինում գրել էր, որ ապրիլի 1-ից հայկական ավիաընկերություններից գրեթե բոլորը չունեն չվերթներ Երեւանից դեպի Մոսկվա:

«Ժողովուրդ» օրաթերթը կապվել էր Քաղավիացիայի կոմիտեի հետ, որտեղից մեզ պատասխանել էին, որ նման խնդիր չկա. հնարավոր է՝դա կապված լինի օդանավ շահագործող ավիաընկերությունների շահագործման թույլտվության հետ, որի համար մրցույթը պիտի լինի հաջորդ տարի: Այժմ եւս հայկական ավիաուղիներում Երեւան-Մոսկվա չվերթներ կրկին չկան:

Հայկական ավիաընկերությունները մարտի 31-ից դեպի Մոսկվա չվերթներ չունեն: Եղած չվերթներն էլ արդեն սպառվել են, եւ մարտ ամսի տոմսերը գրեթե սպառված են:

Սա դեռ ամենը չէ. Հայաստանը կարծես հրաժարվել է Ռուսաստան մեկնող չվերթներից, սակայն Ռուսաստանից Երեւան չվերթներ ռուսական ավիաընկերություններում կան մինչեւ 2024 թվականի նոյեմբերի 22-ը:

Հավելենք նաեւ, որ Ամանորի շեմին Մոսկվա-Երեւան եւ Երեւան-Մոսկվա չվերթի ավիատոմսերը կրկնակի թանկանալու են: Օրինակ՝ դեկտեմբեր ամսվա սկզբին Երեւան-Մոսկվա չվերթի տոմսերի արժեքը տատանվելու է 42-ից 54 հազար դրամի սահմաններում:

Դեկտեմբերի 25-30-ին Երեւան-Մոսկվա չվերթի տոմսերի արժեքը տատանվելու է 114-130 հազար դրամի սահմաններում:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՍՏԱՆԱՆ

Սյունիքի մարզի Շուռնուխ եւ Որոտան բնակավայրերի բնակիչները, որոնց անշարժ գույքն անցել է Ադրբեջանի վերահսկողության տակ, եւս 5 ամիս (օգոստոսից դեկտեմբեր) սոցիալական օգնություն կստանան: Այս մասին որոշում կայացվեց կառավարության նոյեմբերի 23-ի նիստում: Հիմնավորման մեջ նշվում է, որ, կառավարության որոշմամբ, 2021-ի փետրվարից մինչեւ 2023-ի հուլիս ամիսը ներառյալ այդ շահառուներին տրամադրվել է միանվագ (300,000.0 դրամ) եւ ամենամսյա (68000 դրամ) դրամական օգնություն: Այժմ ամենամսյա դրամական օգնության տրամադրման ժամկետը երկարաձգվում է մինչեւ 2023-ի դեկտեմբեր:

Սյունիքի մարզպետարանի տվյալների համաձայն՝ աջակցության ցուցակում ընդգրկված շահառուների թիվն անփոփոխ է՝ 38 անձ: Նախագծի ընդունման դեպքում ծրագրում ընդգրկված 38 անձի համար հինգ ամիսներին դրամական օգնություն տրամադրելու համար անհրաժեշտ կլինի հատկացնել 12,92 մլն դրամ (38 x 5 x 68000=12,920.0 հազար դրամ):

Միաժամանակ առաջացել է անհրաժեշտություն ավելացնելու «Սոցիալական բնակարանային ֆոնդի սպասարկման ծառայությունների տրամադրում» միջոցառման գծով նախատեսված ֆինանսական միջոցները 1,600.0 հազար դրամով: Ավելացումը պայմանավորված է նվազագույն աշխատավարձի ավելացմամբ:

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 11 ճՏՊ. 13 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ՔԵՂՉԵՐ

ՍԵՎ ՈՒՐԲԱԹ՝ Wildberries–ՈՒՄ

Wildberries-ում, Սեւ ուրբաթին ընդառաջ՝ դեռ նոյեմբերի 11-ից, մեծ զեղչեր էին հայտարարվել: Օգտատերերին խոստանում էին մեծ եւ մեգա ակցիաներ: Նոյեմբերի 11-ին Wildberries-ի հաճախորդները մեծ հիասթափություն ունեցան, երբ տեսան, որ որոշ ապրանքների արժեքները, 60-70% էժանանալու փոխարեն, կրկնակի թանկացել են:

Wildberries-ի օգտատերերը «Ֆեյսբուք»-ում բացված խմբում բողոքում են, որ զեղչերի սեզոնին ակցիաներ անելու փոխարեն՝ հավելյալ շահույթ ստանալու համար թանկացնում են ապրանքները 10-20%-ով:

Օգտատերերից մեկն իր նախընտրած վերարկուն պահել էր զամբյուղում հատուկ զեղչերի շրջանում գնելու համար, սակայն վերարկուն 30 հազար դրամից դարձել էր 70 հազար դրամ: Մեկ այլ օգտատեր էլ նույնկերպ ձմեռային կոշիկներ էր ցանկացել գնել, երբ զեղչերի ընթացքում այն 31 հազար դրամից դարձել էր 42 հազար դրամ:

Հայաստանում օնլայն խանութների եւ սովորական խանութներ դեպքում նման «հնարամտությունները» արժանանում են ՏՄՊՊՀ-ի ուշադրությանը եւ տուգնավում:

Նաեւ նմանատիպ խարդախություններից խուսափելու համար այս ամենը Հայաստանում կարգավորվում է գնումների մասին համապատասխան օրենքով: Օրինակ՝ նախորդ տարի նույն ժամանակահատվածում նման դեպքերի համար հանձնաժողովը տուգանել է 32 շահառուի գրեթե 100 մլն դրամ:

ԾԱՆՈՒՑՈՒՄ

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կանոնադրական կապիտալի նվազեցման մասին որոշման ընդունման վերաբերյալ

Ղեկավարվելով «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթներով՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն ծանուցում է իր բոլոր պարտատերերին, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի միակ բաժնետեր «Գազպրոմ» ՀԲԸ-ն (ՌԴ) 10.11.2023թ. որոշում է ընդունել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալի չափը նվազեցնել մինչեւ 315 158 443 460 (երեք հարյուր տասնհինգ միլիարդ մեկ հարյուր հիսունութ միլիոն չորս հարյուր քառասուներեք հազար չորս հարյուր վաթսուն) դրամ:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

Կորել է Երեւանի ԳԳՄ Մալաթիա-Սեբաստիա ՏԱԾ ծառայության ճարտարագետ Կարեն Կարապետի Մխիթարյանի վկայականը՝ տրված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

Կորել է Երեւանի ԳԳՄ Մալաթիա-Սեբաստիա ՏԱԾ ծառայության ԳԲՀՏՍ եւ Ծ տեղամասի վերանորոգող-փականագործ Դավիթ Բորիսի Խոդերյանի վկայականը՝ տրված «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կողմից:

«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» Գ

ԿՆՔԵՑԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«Արդշինբանկ»-ը եւ «Դալան» տեխնոպարկը հայտարարեցին համաձայնագրի կնքման մասին: «Արդշինբանկ»-ը դարձավ տեխնոպարկի հիմնական գործընկերը՝ ֆինանսավորելով կառուցապատման ոլորտի ամենամասշտաբային նախագծերից մեկը:

Համաձայնագրի ստորագրումը կազմակերպված էր «Դալան»-ի շինարարական հրապարակում, որտեղ ներկա էին նախագծում ներգրավված ընկերությունների ներկայացուցիչներ, հյուրեր, գնորդներ:

«Դալան» տեխնոպարկի նախագծի կառավարմամբ զբաղվող 1SQ ընկերության տնօրեն Հայկ Բագրատունին նշեց. ««Դալան» տեխնոպարկը մեր կարեւորագույն նախագծերից մեկն է, եւ մենք բարձր ենք գնահատում ծրագրի իրականացման ճանապարհին վստահելի գործընկերների հետ համագործակցությունը: Համոզված ենք, որ նման հավակնոտ նախագծի կայացումը բարենպաստ պայմաններ կստեղծի SS ոլորտի առաջատար միջազգային ընկերությունների շրջանում Հայաստանի գրավչության բարձրացման համար»:

«Մեր նպատակն է ստեղծել դինամիկ զարգացող բիզնես միջավայր, որը կհամախմբի հայաստանյան, տարածաշրջանային եւ միջազգային առաջատար տեխնոլոգիական ընկերություններին մեկ հարկի տակ եւ կդառնա տարածաշրջանում միջազգային ստանդարտներին համապատասխան եզակի բիզնես պարկ, որտեղ կստեղծվեն հարմարավետ պայմաններ աշխատանքի, մասնագիտական որակավորման բարձրացման եւ ստեղծագործ մտքի զարգացման համար»,- իր ելույթում նշեց նախագծի ղեկավար Երվանդ Հովհաննիսյանը:

«Արդշինբանկ»-ի կորպորատիվ բիզնեսի տնօրեն Արմեն Գասպարյանը նշեց. ««Արդշինբանկ»-ը կարեւորում է արդյունավետ գործընկերային հարաբերությունների ձեւավորումն ու հայրենի բիզնեսին օգտակար լինելը, ուստի մենք ֆինանսավորում ենք երկրի համար նշանակալի ծրագրեր: «Դալան» տեխնոպարկի նախագիծը դրա հաստատումն է: «Արդշինբանկ»-ի վարկավորման շնորհիվ՝ նախագիծը կֆինանսավորվի շարունակաբար եւ կիրականացվի նախատեսված ժամկետներում:

Մեր տեսանկյունից «Դալան» տեխնոպարկի նախագիծը ոչ միայն կբարձրացնի Հայաստանի գրավչությունը SS ընկերությունների եւ ներդրողների համար, այլ նաեւ, որ շատ կարեւոր է, կստեղծի հիմնովին նոր աշխատանքային պայմաններ շուրջ 3000 օֆիսային աշխատողի համար: Որպես համակարգային նշանակության ֆինանսական կառույց՝ մենք պատրաստ ենք նման նախագծերին ոչ միայն ֆինանսապես աջակցել, այլեւ բիզնեսին տրամադրել ամենաժամանակակից ֆինանսական ծառայություններ եւ խորհրդատվություն: Հուսով ենք, որ «Դալան» տեխնոպարկի ստեղծումը լրացուցիչ խթան կհանդիսանա մեր քաղաքի եւ ամբողջ հանրապետության հետագա տնտեսական զարգացման համար: Ուրախ ենք, որ այդ զարգացման մեջ «Արդշինբանկ»-ն ունի իր մասնաբաժինը»:

Տեխնոպարկի շինարարությունը կավարտվի 2026 թվականին:

Բանկը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՇԱԽՍԵՐ

ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ՝ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՔԱՂԱՔԻՆ

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՀ կառավարության երեկվա նիստում գործադիրը որոշում է կայացրել 2023 թվականին ԿԳՄՍ նախարարությանը հատկացված միջոցներից 87 մլն 696 հազար դրամն ուղղել «Ակադեմիական քաղաք» ծրագրի նախագծահետազոտական ծախսերին, որի շրջանակում կիրականացվի քաղաքի գլխավոր հատակագծի մշակման աշխատանքների առաջին վճարումը:

Հարցը զեկուցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ Կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 26-ի որոշմամբ հաստատվել էր մեկ անձից գնման ընթացակարգով գերմանական «ՋիԷմՓի ինթերնեյշնլ» ճարտարապետական ընկերության եւ «Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամի կոնսորցիումից համապատասխան աշխատանքների ձեռք բերումը, որի հիման վրա՝ հոկտեմբերի 30-ին արդեն կնքվել է պայմանագիր:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ այն պետք է իրականացվի երկու փուլով եւ երեք վճարմամբ. «Այս պարագայում իրականացնում ենք կանխավճարը, որին կհաջորդեն առաջին եւ երկրորդ փուլերը: Պայմանագրի ընդհանուր արժեքը կազմում է 597 մլն 245 հազար դրամ, ընդ որում՝ սա առավելագույն արժեքն է. շուրջ 193 մլն դրամը կծախսվի, եթե բացի հիմնական տեղամասից, կարիք լինի անդրադառնալ նաեւ պահեստային՝ «Հայֆիլմ»-ի տարածքի նախագծման աշխատանքներին»,-նշել է նախարարը:

Նախարարը նաեւ տեղեկացրել է՝ Հայաստանում այսօր մեծ թափով իրականացվում են դպրոցաշինության եւ մանկապարտեզների կառուցման աշխատանքներ, եւ բոլոր հաստատություններն ու շենքերը հարմարեցված են հաշմանդամություն ունեցող անձանց կարիքներին: Նույնն ակնկալվում է նաեւ Ակադեմիական քաղաքում. «Ամեն նոր շենքի հետ գտնվում են ավելի հարմար եւ դյուրին լուծումներ, որտեղ ներառականությունը կարելի է ապահովել: Եվ սա վերաբերում է ոչ միայն շենքերին, այլեւ գործընթացին, քանի որ ներառական կրթությունը նաեւ բովանդակությունն է, կազմակերպման, աշխատանքի ձեւը, դասավանդման մեթոդները: Այս ամենը հաշվի է առնվում. Ակադեմիական քաղաքում կրթությունը լինելու է ժամանակակից ամենաբարձր միջազգային չափանիշներին համաձայն»:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԿԱՐԾԻՔ

ԱՆՀԱՅՏ Է

Ո՞Վ ԿԼԻՆԻ ՀՖՖ ՆԱԽԱԳԱՀԸ

Նոյեմբերի 7-ին տեղի ունեցած ՀՖՖ գործադիր կոմիտեի հերթական նիստի արդյունքում հստակեցվեց, որ հերթական՝ 24-րդ ժողովը կանցկացվի դեկտեմբերի 23-ին՝ ժամը 13:00-ին, ՀՖՖ գրասենյակում:

ՀՖՖ նախագահի պաշտոնավարման ժամկետի լրացմամբ պայմանավորված՝ ժողովն ընտրական է լինելու: Ավելի պարզ ասված՝ դեկտեմբերի 23-ին պետք է ընտրվի ՀՖՖ նոր նախագահ: Իսկ ովքե՞ր են հավանական թեկնածուները: Մամուլում մինչ այս պահը պտտվում էին մի քանի անուններ, սակայն դեռ պաշտոնապես իր թեկնածությունը հաստատել է Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին կիսապաշտպան Արազ Օզբիլիսը՝ շոկի ենթարկելով իշխանական վերնախավին:

«Միշտ ասել եմ, որ կարիերայի ավարտին հայկական ֆուտբոլին օգուտ տամ: Կարծում եմ, որ հայկական ֆուտբոլն այժմ կարեւոր խաչմերուկի վրա է: Ես իմ թեկնածությունն եմ դնում ՀՖՖ նախագահի ընտրություններում: Իմ փորձով ու նվիրվածությամբ կարող եմ մեծ օգուտ բերել հայկական ֆուտբոլին»,- լրագրողների հետ զրույցում ասաց Օզբիլիսը:

Նրա թեկնածությունը հավանական է այնքանով, որ վերջինս փորձառու ֆուտբոլիստ է, նրան երկրպագուները սիրում են, հավանում են նրա խաղը, եւ, ահա, կարիերայի ավարտից հետո սեփական փորձով երիտասարդ ֆուտբոլիստների հետ կիսվելը յուրաքանչյուր ֆուտբոլասեր լավագույն որոշումը կհամարի:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՀՖՖ նախագահի պաշտոնին հավակնողների ցանկում գտնվող ներկայիս նախագահ եւ նախկին մարզական լրագրող Արմեն Մելիքբեկյանի անվան շուրջ տարակարծություններն ամենաշատն են:

Նա իշխանության սիրելիներից է, սակայն քաղաքական էլիտան կարծում է, որ պետք չէ նրան որպես թեկնածու առաջադրել, քանի որ մրցակցություն, որպես այդպիսին, չի լինի այդ դեպքում: Այսպիսով, ստացվում է, որ իշխանական վերնախավը ՀՖՖ նախագահի թեկնածուի հարցում ձեռնունայն է մնացել: Մամուլում որպես ՀՖՖ նախագահի մեկ այլ թեկնածու է դիտարկվում Մխիթար Հայրապետյանը, որի առաջադրման մասին եւս որեւէ պաշտոնական խոսակցություն չկա: Իհարկե, նա եւս դասվում է ՀՖՖ լավագույն կառավարիչների թվին, որը սրտացավորեն կարող է ղեկավարել կառույցը, սակայն թե ինչ կորոշվի՝ Հայրապետյանի թեկնածության առաջադրման հետ կապված, դեռեւս անհայտ է:

ՄԱՐԻԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽ

ՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԵՏՔԸ

Կովկասյան ժառանգության պաշտպանության միջազգային կազմակերպությունը (Caucasus Heritage Watch) ահազանգում է, որ հոկտեմբերի 5-ից մինչեւ նոյեմբերի 3-ն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանը ճանապարհ է հարթել Շուշիի պատմական գերեզմանատան միջով, որը հայտնի է որպես Երեւանյան դարպասների կողմի գերեզմանոց:



«Սա այն 6 հայկական գերեզմանոցներից մեկն է, որը փրկվել է դեռեւս խորհրդային տարիներին Ադրբեջանի իրականացրած վանդալիզմի քաղաքականությունից: Խորհրդային տարիներից դեռ Ադրբեջանը Շուշին որպես ադրբեջանական քաղաք ներկայացնելու, հայկական գործոնը Շուշիում իսպառ վերացնելու նպատակով հայկականության հետքերը մաքրելու քաղաքականության ծիրում քանդում էր նաեւ հայկական գերեզմանոցները՝ տեղը կառուցելով շենք-շինություններ: Հիմա էլ, փաստորեն, ճանապարհի կառուցման պատրվակով քանդում է հյուսիսային գերեզմանոցը: Այնտեղ կան 8 տասնյակի հասնող հայերի տապանաքարեր, որոնք իրենց արձանագրություններով բավականաչափ ինֆորմացիա են տալիս Շուշիի պատմության, այնտեղ ապրած մարդկանց կենցաղի, արհեստների, մշակութային ընկալումների մասին»,- «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրել է «Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի նախկին տնօրեն Արմինե Հայրապետյանը: 2020 թվականի նոյեմբերից ի վեր գերեզմանատներ քանդելու 5-րդ դեպքն է սա Մեծ Թաղերի, Սղնախի, Շուշիի եւ Վազգենաշեն գյուղի մերձակայքում գտնվող գերեզմանատների ավերումից հետո:

«Զեդո-Բաբո»-ն կքանդե՞ն

Վերջերս համացանցում լուրեր էին պտտվում, որ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը հրամայել էր քանդել «Մենք ենք մեր սարերը» հուշարձանը: Ավելի ուշ սկսեցին խոսակցություններ տարածվել, թե ադրբեջանցիները արդեն սկսել են քանդել այն: Այդ առիթով ArmLur.am-ը հեռախոսազրույց է ունեցել Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Լեռնիկ Հովհաննիսյանի հետ: «Այս պահի դրությամբ հստակ տեղեկություն չկա: Ադրբեջանական թելեգրամյան ալիքներով տարբեր օգտատերեր կոչ են անում քանդել հուշարձանը, փոխարենը կանգնեցնել «Երկաթե բռունցք»-ը»:

ԿԱՐԵՎՈՐ

ԳԱՂԹԻ ԵՐԿԱՐ ՃԱՆԱՊԱՐՀԸ

«Անասելի ցավ ու կարոտ է հիմա հոգումս, մենակ տղերքն են ափսոս, որ իրենց արյունով պահած հողը հանձնեցին, վաճառեցին շներին: Երանի՜ տղերքը չզոհվեին.... Երանի՜ եղբայրներս կողքիս լինեին»,- «Ժողովուրդ» օրաթերթին ասում է Արարատ եւ Արայիկ Աբաղյանների քույրը՝ Արմինեն, որն Արցախից բռնի տեղահանվել է:

Արմինե Միրզախանյանը ծննդով Հադրութի շրջանի Մեծ Թաղեր գյուղից է: 44-օրյա պատերազմից հետո կրկին վերադարձել է Արցախ՝ ապրելու ու արարելու:

«Գաղթի ճանապարհը անբացատրելի նվաստացուցիչ էր. ինչեր ասես, որ չենք տեսել այդ 34 ժամում: Սկեսրայրս գաղթի ճանապարհին սրտի ինֆարկտից մահացավ: Երեխաներս վախվորած էին: Անընդհատ մտածում էի, որ մի վատ բան կպատահի»,- ասում է Արմինեն: 44-օրյա պատերազմն Արմինեից տարավ փոքր եղբորը՝ Արայիկ Աբաղյանին, իսկ 2023թ. սեպտեմբերի 19-ին զոհվեց մեծ եղբայրը՝ Արարատ Աբաղյանը: «Փոքր եղբայրս՝ Արայիկը, ավարտելով ծառայությունը, նորից անցավ ծառայության «Ցոր» զորամասում համալրելով սպայական կազմը: Արայիկը մարտնչել է Ասկերանից Հադրութ ընկած հատվածներում: 44-օրյա պատերազմից հետո Արարատը շարունակեց ապրել Արցախում: Բլոկադայի օրերին համալրեց աշխարհազորայինների շարքը: Սեպտեմբերի 19-ին զոհվել է: Երկուսին էլ հուղարկավորել ենք «Եռաբլուր»-ում»,- պատմում է քույրը եւ հավելում, որ մահը լավագույններին տարավ՝ հարգատներին թողնելով ցավի, տառապանքի մեջ:

44-օրյա պատերազմից հետո ծնողները հաստատվել են Մասիսում, իսկ ինքն ընտանիքի վեց անդամների հետ բնակվում է քաղաք Հրազդանում:

ԸՆԴԳՐԿՎԵԼ ԵՆ ՕՐԱՑՈՒՅՑՈՒՄ

ՅՈՒՆԵՍԿՕ-ի գլխավոր համաժողովի՝ նոյեմբերի 7-ից 22-ը Փարիզում ընթացող 42-րդ նստաշրջանի ընթացքում որոշում է ընդունվել Շառլ Ազնավուրի եւ Սերգեյ Փարաջանովի ծննդյան 100-ամյա հոբելյանները ՅՈՒՆԵՍԿՕ-ի հռչակավոր մարդկանց եւ կարեւոր իրադարձությունների հոբելյանների 2024-2025թթ. օրացույցում ընդգրկելու վերաբերյալ:Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկացրին ՀՀ ԱԳ նախարարությունից, Հայաստանի Հանրապետության կողմից վերոնշյալ հայտերը ներկայացվել են գործընկեր երկրների հետ համատեղ՝ ստանալով զգալի աջակցություն մի շարք անդամ երկրների եւ երկրների խմբի կողմից: Մասնավորապես, ֆրանսահայ հռչակավոր երգիչ, երգահան, դերասան Շառլ Ազնավուրի 100-ամյա հոբելյանի վերաբերյալ հայտը համատեղ կերպով ներկայացվել է Հայաստանի եւ Ֆրանսիայի կողմից՝ Անդորրայի, Իտալիայի, Լյուքսեմբուրգի, Մոնակոյի, Պորտուգալիայի, Սենեգալի եւ ավելի քան 80 անդամ ունեցող ՅՈՒՆԵՍԿՕ-ի ֆրանկոֆոն դեսպանների խմբի աջակցությամբ: Անվանի կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովի 100-ամյա հոբելյանի վերաբերյալ հայտը համատեղ կերպով ներկայացվել է Հայաստանի, Վրաստանի եւ Ուկրաինայի կողմից՝ ստանալով Կիպրոսի, Ֆրանսիայի, Իտալիայի, Լիբանանի եւ Լեհաստանի աջակցությունը:

● *Նոյեմբերի 25-ին Սոս Սարգսյանի անվան համազգային թատրոնում տեղի կունենա «Պյերետտայի քողը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ՂԱԶԱՐՅԱՆԻ

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Քոլեջի ո՞ր շրջանավարտը կարող է ուսումը շարունակել բուհի 2-րդ կուրսում եւ կրթության ի՞նչ ձեւով:

Զոյա Բադալյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քոլեջի՝ բարձր առաջադիմություն ցուցաբերած շրջանավարտների՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում համապատասխան մասնագիտությամբ կրթությունը շարունակելու գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության 2015 թվականի հուլիսի 8-ի N 752-Ն որոշմամբ:

Հավակնորդների կրթությունը բուհում կազմակերպվում է հետեւյալ կերպ՝ մինչեւ 2014 թվականը ՄՄՈՒՀ ընդունված հավակնորդների դեպքում՝ առկա կամ հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը, իսկ հետագա ժամանակաշրջանում ընդունված հավակնորդների դեպքում՝ միայն հեռակա ուսուցմամբ երկրորդ կուրսում, եթե ուսումնառած եւ նախընտրած մասնագիտության ուսումնական պլաններով նախատեսված առարկաների (մոդուլների) առարկայական տարբերությունների քանակը չի գերազանցում 8-ը:

ՀՀ ԿԳՄՍՆ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Առարկայական տարբերություն է համարվում նախընտրած մասնագիտության ուսումնական պլանով հաստատված, սակայն հավակնորդի կողմից չուսումնասիրված, չգնահատված առարկաների ժամաքանակների կամ մոդուլային ուսումնական ծրագրի բովանդակության համեմատությամբ առնվազն 30 եւ ավելի տոկոս կազմող տարբերությունը:

Հավակնորդը կամ քոլեջը համապատասխան փաստաթղթերը ներկայացնում է բուհ մինչեւ տվյալ տարվա օգոստոսի 30-ը:

Հատկացված տեղերից ավելի դիմումների դեպքում սահմանված կարգով անցկացվում է մրցույթ:

ԱՐԺՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ինչո՞վ են պայմանավորված ՀՀ դրամի փոխարժեքի տատանումները:

Սմբատ Վերդյան (34 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ազատ լողացող փոխարժեքի ռեժիմի պայմաններում ազգային արժույթի փոխարժեքը ձեւավորվում է արժութային շուկայում առկա առաջարկի ու պահանջարկի եւ դրանց փոփոխությունների ազդեցության ներքո: Եթե արտահանման աճի կամ կապիտալի ներհոսքի հետեւանքով տվյալ ազգային արժույթի շուկայում ավելանում է արտարժույթի առաջարկը, ազգային արժույթի դիրքերն անհրաժեշտաբար ամրապնդվում են: Համապատասխանաբար, ներմուծման աճը կամ կապիտալի արտահոսքը նպաստում են ազգային արժույթի դիրքերի թուլացմանը: Արժութային շուկայում առկա առաջարկն ու պահանջարկը կարող է փոփոխվել նաեւ մի շարք այլ գործոնների ազդեցության ներքո, որոնցից են, մասնավորապես, կառավարության ծախսերը, կենտրոնական բանկի ինտերվենցիաները, արժութային կարգավորման ոլորտում օրենսդրական փոփոխությունները, էներգակիրների գների տատանումները, բնակչության մոտ ձեւավորվող սպասումները:

ՀՀ Կենտրոնական բանկ

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փոխարժեքի փոփոխությունը կարող է լինել բավականին տեւական, երբ այն պայմանավորված է երկարաժամկետ բնույթի գործոններով (օրինակ՝ կայուն տնտեսական աճով պայմանավորված ազգային արժույթի արժեքավորումը), կարող է կրել սեզոնային բնույթ (երբ, օրինակ, ներմուծման ու արտահանման սեզոնները տարբեր են) եւ կարող է լինել կարճաժամկետ, երբ այն կարճաժամկետ գործոնների (օրինակ՝կարճաժամկետ ֆինանսական ներհոսքի կամ արտահոսքի) ազդեցության արդյունք է:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից



Գորիսը շուտով երեկոյան ժամերին հեքիաթային տեսք կստանա, կլուսավորվեն Գորիսի ժայռերը: Ժայռերի լուսավորության ծրագրի նախագծային աշխատանքները ավարտական փուլում են, ավարտից հետո կմեկնարկեն լուսավորության անցկացման աշխատանքները:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 - 7 / + 3 + 5	
Կոտայքի լեռներ	- 3 - 7 / + 2 + 6	
Կոտայքի նախալեռներ	- 2 + 1 / + 1 + 4	
Գեղարքունիք	0 - 5 / + 2 + 5	
Լոռի	- 4 + 1 / + 3 + 8	
Տավուշ	- 1 + 3 / + 5 + 9	
Արագածոտնի լեռներ	- 2 - 6 / 0 + 3	
Արագածոտնի նախալեռներ	+ 1 + 3 / + 6 + 10	

Արարատ	+ 2 + 5 / + 10 + 13
Արմավիր	+ 3 + 6 / + 11 + 13
Վայոց ձորի լեռներ	0 + 5 / 0 + 2
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 / + 11 + 3
Սյունիքի հովիտներ	+ 1 + 5 / + 12 + 16
Սյունիքի նախալեռներ	0 - 4 / + 10 + 14
ԼՂՀ	0 - 3 / + 3 + 7
Երեւան	+ 2 + 4 / + 9 + 11

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **23.11.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*